Խաչիկ Դաշտենց

Ռանչպարների Կանչը

5

ՇԱՊԻՆԱՆԴ

Այդ կրակոցի հաջորդ օրը Սերոբ Աղբյուրն ինձ մի կոտրած հրացանի կոթ տվեց, որ տանեմ նորոգելու:

Վարպետ Շապինին կտաս, ասաց ու ձեռքով ցույց տվեց իմ գնալիք տեղը՝ Տալվորիկի ուղղությամբ:

Է, ասացի ինքս ինձ, եթե Խլաթից հասել եմ մինչև Գելի, ուրեմն կարող եմ նաև Տալվորիկ գնալ: Մարդ ինչքան շատ աշխարհ տեսնի, այնքան Լավ:

Ու բռնեցի Տալվորիկի ճամփան: Անցա Ղարիպշան, Մխիթար և Տեղ թաղերը և սկսեցի Անդոկով բարձրանալ: Խտանա կածը շուռ էի գալիս, երբ մեկը իմ թիկունքից գոռաց:

Նայեցի տեսնեմ՝ մի ջրտուքվար է:

Դեպի ո՞ր:

Տալվորիկ կերթամ, ասացի:

Ա՛յ ծուռ, ասաց, քո գնալիք տեղը Տաղվրնիկն է և ոչ թե Տալվորիկ:

Հասկացա, որ սխալ եմ եկել և ետ դառնալով քայլերս ուղղեցի դեպի Տաղվրնիկ: Երանի նրանց, որոնք շուտ են ուղղում իրենց սխալ ճամփան:

Տագվրնիկը Գելու թաղերից մեկն էր: Այն տունը, որ պետք է գնայի, թառած էր մի բարձրիկ ժայռի: Հաստ պատերով տուն էր, ճակատով դեպի հարավ:

Շեմքի մոտ նստած էր մի տղամարդ՝ մի ձեռքը նեցուկ արած գլխին, մյուսով ծխամորճը պահած: Ոտքերը խոշոր էին, մեծ տրեխներով: Կորացած մեջքը և զորավոր թիկունքը հսկայի երևույթ էին տալիս նրան: Կարծեցի, թե իմ ոտնաձայնից ուշքի կգա, բայց տեղից չշարժվեց: Երևի քնած էր:

Համարձակ մոտեցա շեմքին: Դուռը մի փեղկանի էր, ընկույզի երեք հաստ տախտակներից շինված:

Հրեցի և ներս մտա:

Փողանը մութ էր: Ամբողջ երկայնքով վառելափայտ էր դարսված, մեծ-մեծ կոճղեր և չորացած ծառեր: Թեքվեցի դեպի ձախ և մտա տան գլխավոր մասը, ուր թվեկն էր՝ օջախը: Ամբարը և մառանը մնացին աջ թևի վրա: Թվեկը պատի մեջ էր, կիսաղեղի ձևով և բուխարիկով միացած երդիկին: Սալաքարը դեռ տաք էր, երևի կրակը նոր էր հանգել: Կողքին գաթաներով լի մի տաշտակ կար՝ ընկուզենու կանաչ տերևներով ծածկված: Քանի որ սասունցու տուն եմ մտել և նոր թխած հաց կա, եկ դրանցից մեկը ուտեմ: Եմ ասելն ու տաշտակից մի գաթա վերցնելը մեկ եղավ: Բայց հանկարծ վարանեցի: Չլինի՞ թե սխալ տուն եմ մտել: Արագ նետվեցի դեպի փողանը, որ դուրս գամ: Դիպա մի սյունի և մի բան վայր ընկավ: ճրագն էր: Ի՜նչ արած, որ անծանոթ տանը մի գաթա եմ կերել կամ մի հողե ճրագ եմ շուռ տվել մութի մեջ: Սասունցու տունը միշտ բաց է, իսկ սիրտը այնքան ճրագներ ունի, որ կարող է ամբողջ աշխարհը լուսավորել: Ձեռքս տարա դեպի սողնակը, որ դուռը բանամ: Մի խուլ թխկոց դիպավ ականջիս: Պատի մեջ բացվեց մի դուռ, որը ինձ տարավ դեպի մի ընդարձակ աչք. ախոռն էր: Գլուխս կամաց ներս մտցրի:

Մի մարդ ախոռի վերին անկյունում նստած ինչ-որ բան էր շինում: Գոմը մութ էր և ես նրան տեսնում էի կիսաստվերի միջով: Ինձ օգնում էր արևի շողքը, որ

թեքությամբ իջել էր նեղլիկ շբաքից: Հատակը սալած էր անտաշ քարերով: Թացությունից այդ սալաքարերը տեղ-տեղ փայլում էին, մանավանդ մսուրի մոտ, ուր մի մարդ էր նստած՝ արևի շողքը ճակատին:

Էստեղ ո վ կա հրացանի կոթ շինող, հարցրի ես, մսուրի կողմից զգուշությամբ մի քանի քայլ առաջանալով:

Բեր, վարպետ Շապինը կշինի, ձայն տվեց գոմի կիսաստվերում զբաղված մարդը առանց գլուխը բարձրացնելու:

Անծանոթ արհեստավորը բանում էր տակը փռած մի թաղիքի վրա: Ձեռքին եղածը մի հին փակաղակ էր, որ նա նորոգելով աշխատում էր տեղը գցել: Թիկնեղ տղամարդ էր, ճակատը լայն, փոքր-ինչ կլոր դեմքով, բեղը շեկ և սրածայր ոլորած: Գլխի սև մազերի միջից սպիտակին էր տալիս մի լուսնածև ճաղատ: Կողքին մի սնդուկ կար փոքրիկ գավը վրան, իսկ մեջքի ետևը՝ թամբածև մի կոճ, որ հյուսնի գործասեղանն էր հիշեցնում:

Վարպետ Շապինը գարահիսարցի էր: Տակավին պատանի փախել էր իր ծննդավայրից և երկար թափառումներից հետո եկել էր Սասուն: Լսել էի, որ նա հյուսնի որդի էր և Սասունում գլխավորապես իր հոր արհեստն էր բանեցնում: Միաժամանակ հրացանի կոթ շինող էր և հրազենի կոտրած մասերը վարպետորեն նորոգող: Ու այժմ աչքով տեսնում էի նրա ձեռքի գործը:

Փաշեն տվեց, ասացի ես և հրացանի խզակոթը տոպրակից հանելով՝ մեկնեցի նրան:

Փաշեն ո՞վ է:

Նեմրութի Սերոբը:

Բոլորը փաշա են դարձել: Չլինի" թե դու էլ ես ուզում փաշա դառնալ, ասաց նա փակաղակը ձեռքին հարցական նայելով ինձ:

Ոչ, ես մի հասարակ ընտանիքի զավակ եմ:

Արհեստ ունե՞ս:

Սոլկար եմ, ասացի:

Լավ արհեստ է և կյանքում շատ պետք կգա: Իսկ կարդալ գիտե՞ս:

Գիտեմ, ասացի:

«Շունն ու կատուն» կարդացե՞լ ես:

Այո:

Իմ ոտնամանը ծակվել է, կարո՞ղ ես կարել, հարցրեց նա:

Կարող եմ, բայց ձեռքիս գործիք չունեմ:

Ես ունեմ, տղաս: Դ՛ու նստիր քովս և իմ կոշիկը նորոգիր, մինչև ես քո փաշի հրացանի կոթը շինեմ: Ասաց և կոշիկը ոտքից հանեց: Մեջը ավազ էր, թափ տվեց և հանձնեց ինձ: Ես հասկացա, որ նա ավելի շուտ ինձ փորձելու համար այդ առաջարկը արեց, քան թե լրջորեն ուզում էր, որ ես իր ոտնամանը կարեմ: Ջինվորական մի մեծ պայուսակ ուներ մոտը: Գործիքները հանեց և ես, իր կողքին նստելով, սկսեցի նորոգել իր ոտնամանը:

Մենք աշխատում էինք միասին: Վարպետ Շապինը փականակը տեղն էր գցել և զբաղված էր Սերոբ Աղբյուրի հրացանի կոթը շինելով, իսկ ես եռանդով նորոգում էի նրա ոտնամանը: Լուռ էինք աշխատում և կարծես իրար հետ մրցելով: Երբ վերջացրի, նա կոշիկը հագավ և ձեռքը ուսիս դնելով ասաց.

Աֆերիմ, տղաս, լավ կար ունես: Իմ ձախ ոտքը ավազներից ազատեցիր: Ա՛յ, ես եկել եմ Տարոն և հրացանի կոթ ու փականակ եմ շինում, երբեմն էլ՝ դուռ ու լուսամուտ: Դա– տավորի գործ էլ եմ անում գյուղացիների ներքին վեճերը մաքրելով: Ի՛նչ արած, պետք է: Եվ որտե՞ղ եմ նստած՝ ախոռում: Չատոյի գոմն է: Վերջերս մի անբուժելի ոսկրացավ է բռնել ինձ: Տիրամոր քամի են ասում: Ամեն օր ձեռնափայտը ձեռքիս իջնում եմ ձորը, պառկում արևից տաքացած ավազի մեջ, որ ցավերս մեղմանան: Մի քիչ էլ սա է օգնում: Նա թեքվեց սնդուկի

վրա և գավը մոտեցրեց բերանին: Օղի էր: Մի կում խմեց:

Ապա պատմեց, թե ինչպես Սերոբ Աղբյուրը սկզբում իրեն օգնել էր Սարիղամիշում, բայց հետագայում, երբ ինքը եկել էր Խլաթ նրան զինվոր դառնալու, Սերոբը իրեն զենք չէր տվել և չէր ցանկացել պահել իր մոտ:

Ես ուզում էի նրան հարցնել Գևորգ Չաուշի սարսափելի արարքի մասին, բայց չհամարձակվեցի: Ինձ, թվաց, թե ինքը տեղյակ էր այդ սպանությանը և գաղտնի էր պահում ինձանից:

Ասում են, երեկ մարդ են սպանել Գելիում: ճի՞շտ է, հարցրեց նա դիմելով ինձ:

ճիշտ է, ասացի: Բսանաց Գևորգը սպանել է իր հորեղբորը:

Չիմացա՞ր թե պատճառը ինչ է:

Կին էր փախցրել Աղբիկ գյուղից:

Կնո՞ջն էլ է սպանել:

Այո:

Ծուռ են էդ սասունցիք, քթի տակ ծիծաղեց վարպետ Շապինը և լռեց, հավանորեն չուզենալով այդ մասին խոսել: Երկու թռչուն կա, որ սասունցիները շատ կսիրեն՝ կաքավ և արծիվ: Կաքավին իրենց հավերի հետ կպահեն, իսկ արծվին իրենց տանիքների վրա: Իրենց ուտելիքը շաղգամ է և մածնահատիկ, իսկ մտածելիքը՝ աստվածներից բարձր: Տեսնենք Մոսե Իմոն մեզ ի՞նչ լուր կբերի Եվրոպայից: Ազգի գործով թուղթ է տարել թագավորներին:

Ուզում էի հարցնել, թե ով է Մոսե Իմոն, երբ վարպետ Շապինը վերջին աշխատանքը հյուսնի գործասեղանի վրա ավարտելով, դարձավ ինձ.

Առ, Սերոբ փաշի հրացանի կոթը պատրաստ է: Եվ խզակոթը մի կոշտ ստվարաթղթով սրբելով՝ կոխեց տոպրակիս մեջ:

Յատուկ Պոէմ

Քո փաշեն կնոջը ման է բերում իր հետ, մի բան, որ թույլատրելի չէ հայդուկի օրենքով, իսկ Գևորգ Չաուշի հորեղբորը մեղադրում է կին փախցնելու մեջ: Գաղափարին նվիրված մարդը պետք է ամեն կողմից կատարյալ լինի, ասաց հրացանի կոթ շինողը և նայեց հորթուկի կողմը՝ որոշելու, թե օրվա որ ժամն է:

Արևի շողքը հորթի ճակատից թռել էր մսուրի պատին:

Ձորի ավազը հիմա տաքացած կլինի, ասաց նա, դարձյալ շրջվեց դեպի ձախակողմը և սնդուկի վրայից գավը վերցնելով՝ դրեց բերանին:

Ո՞վ կար դռանը, երբ ներս մտար:

Մեծ տրեխներով մի տղամարդ:

Նա քեզ նկատե՞ց:

Ոչ, քնած էր:

Լսիր, տղաս, ասաց վարպետ Շապինը դատարկ գավը սնդուկին իջեցնելով: Փաշան եթե իմ մասին կհարցնի, ասա, որ ես այս գիշեր Շենիք պիտի երթամ: Իսկ դու իմացիր իմ իսկական անունը: Իմ մկրտության անունը Անդրանիկ է և ինձ այստեղ դոնդաղչի Անդրանիկ են ասում: Իսկ մի քանի հին սասունցիներ անվանում են վարպետ Շապին կամ կարճ՝ Շապինանդ, այսինքն շապինգարահիսարցի Անդրանիկ: Ասքե ետքը դու էլ այդ անունով ճանաչիր ինձ:

Շապինա՛նդ, հնչեցրին իմ շուրթերը խավարի մեջ: Ես վերցրի իմ տոպրակը, մնաս բարով ասի նրան և անաղմուկ դուրս ելա մութ գոմից, դիմելով դեպի Տեր Քաջի տունը, ուր Աղբյուր Սերոբն էր:

ՋՐՎՈՐՆ ՈՒ ԱԼԻԱՆՑԻՔ

Մի երիտասարդ լեռնցի թիակը ուսին քայլում էր Խտանա կածով: Նույն ջրվորն էր, որ գոռալով ցույց էր տվել ինձ Տաղվրնիկի ճամփան: Գդակը թեք դրած գալիս էր լեռնային առվի հետ: Հագած էր մաշված ոտնաման, բրդյա կարմրավուն

տաբատ՝ ճոթերը մինչև ծնկները քշտած, կուրծքը մազոտ ու բաց և կրծքի մազերը խառնված, խճճված աբայի սև մազերին:

Ես ներքևից եկա, նա վերևից իջավ և մենք իր նորածիլ գարու արտի եզրին հանդիպեցինք իրար:

Անունդ բարի:

Ֆադե:

Քո գործը ի՞նչ է էս սարի վրա, Ֆադե քեռի, հարցրի:

Իմ գործը աշխարի ջրելն է, ասաց նա, և մոլորվածներին շիտակ ճամփա ցույց տալը:

Աշխարհն ինչո՞վ ես ջրում:

Էս թիակով:

Մազե աբան հանեց ծալեց մի ժայռի ու նստեց վրան՝ նեղթաթ թիակը երկու ձեռքով ծնկների մեջ սեղմած:

Ֆադեն Տալվորիկի Վերին գյուղից էր: Սուլթանը հրաման էր արձակել, որ Սասունի մեջ զորանոցներ շինվեն: Զորանոցներից մեկի հիմքը դրել էին Ֆադեի շաղգամի արտի մեջ: Զայրացել էր տալվորիկցին և գիշերով բոլոր քարերը շալակելով տարել թափել էր ձորը: Առավոտյան քարերը նորից ետ էին բերվել, մի մասն էլ պարտադրաբար Ֆադեի կռնակին դնելով, և զորանոցը մինչև ձյուն դնելը շինվել էր:

Ու ջրվոր Ֆադեն անիծելով զորք ու զորական, թիակը ուսին դրած փախել էր Տալվորիկից՝ ապավինելով Խտանա կածին: Ընտրել էր մի հարմար տեղ այդ սարի վրա, որ ոչ զորք տեսնի, ոչ զորական: Շաղգամի փոխարեն գարի էր ցանել և իր արտի ջրտուքով էր զբաղված:

Յատուկ Պոէմ

Ջորանոցների հանդիսավոր բացմանը Տալվորիկ է գալիս Բաղեշի կուսակալը: Բոլոր սասունցիները զարդարված և զենք ու զրահ կապած շտապում են նրան դիմավորելու:

Միայն Ֆաղեն է բացակա:

Որտե՞ղ է թագավորի հրամանին դիմադրած ըմբոստ գյուղացին, հարցնում է կուսակալը: Գտեք, բերեք ինձ մոտ:

Ֆաղեն ոտքերը քշտած և բահը ուսին սարից իջնելով, համարձակ գալիս կանգնում է կուսակալի առաջ:

Արար-աշխարհ իմ պատվին զրահ է կապել, դու ինչու ես բահով եկել, սպառնում է փաշան:

Արար-աշխարհի զենքն ու զրահը թող դուրբան էղնեն իմ թիակի պոչին, փաշա: Էս թիակն է պատճառը և ստեղծողը բոլոր զենքերի: Ինչքան էլ թոփ ու թվանքները գոռան, վերջը պիտի խոնարհվեն թիակի առաջ: Ուրեմն, ես քեզ ավելի մեծ պատիվ եմ արել, որ թիակով եմ ներկայացել և ոչ թե ղենք ու զրահ կապած:

Դու ինչ-որ բանի մասին մտածում ես:

Գլուխդ ողջ մնա, փաշա, մտածում եմ թե վաղը մյուս օր, որ Էս զորանոցը քանդվի, էսքան քար ու կիրը ո՞վ պիտի թափի իմ շաղգամի արտից:

Սուլթանի զորանոցին քանդվել չկա:

Շատ բան է քանդվել, սա էլ կքանդվի: Գնա քո սուլթանին ասա, որ Ֆաղեի շաղգամի ծիլը իր զորանոցի հիմքից զորավոր է:

Շաղգամի ծի՞լը:

Դու էդպես ասա սուլթանին: Եվ ավելացրու նմանապես, որ աշխարհը ջրաղաց է և երկուսիս աղունն էլ մի օր կիջնի:

Յատուկ Պոէմ

Աղունն ի՞նչ բան է:

Երբ սուլթանը ինձ նման գարու արտ ցանի Խտանա կածին, իր քաղածը շալակով տանի խութեցի Միրոյի ջաղաց, էն ժամանակ կիմանա, թե աղունն ինչ բան է, ասում է և շուռ գալով դեպի լեռ է բարձրանում Ֆադեն, որոշելով այլևս Տալվորիկ չիջնել, մինչև իր շաղգամանոցում շինված զորանոցը չքանդվի:

Առողջ, ուժեղ մարդ էր Ֆադեն: Միշտ իր մեծապատիվ բահի հետ էր, մազե սև աբան հագին, տաբատի ճոթերը մինչև ծնկները կամ ծնկներից վեր քշտած, ջրի ընթացքի հետ վար իջնելիս կամ լեռնիվեր բարձրանալիս:

Ֆադեի գլխավոր հոգսը մայր վտակն էր, որ թնդալով իջնում էր լեռներից և մի քանի առուների բաժանված գալարապտույտ թոչում էր անդունդներին կախված քարափների վրայով: Բարձունքին կանգնած նա դիտում էր, թե ինչպես աղմկալի այդ ջրերը սպիտակ այծերի պես իրար հեծնելով նետվում էին ահռելի ձորը: Ահա նկատեց՝ առուներից մեկի կողը քանդվել է հեղեղից: Իջավ, նորոգեց ու բարձրացավ:

Խտանա կածի արևոտ լանջին փայլում է մի կապույտ լճակ: Այդ Ֆադեի գարու արտն է: Մի բարակ ջուր մայր առվից երակվելով դեմ է առել կորաթմբին: Կռացավ Ֆադեն և թիակի թաթը այդ ջրի կոկորդին զարկելով՝ նրան մի քանի մանր ճյուղերի բաժանած, հավասար ուղղությամբ տարավ դեպի իր արտի խորքը:

Այդ բարձրության վրա մարդկանց քիչ էր հանդիպում Ֆադեն: Անցորդները մեծ մասամբ ծանոթ լեռնականներ էին: Գիտեր, թե այս կամ այն ճանապարհով գնացողը ուր է գնում և ինչ բեռ ունի շալակին, շիտակ ճամփով է գնում, թե սխալ: Մոլորվածներին թիակի պոչով կամ հեռվից գոռալով ցույց էր տալիս ուղիղ ճանապարհը:

Երբ հարցնում էին.

Ե՞րբ ես իջնելու սարից:

Երբ սուլթանի զորանոցը քանդվի, պատասխանում էր տալվորիկցին:

Տարին բոլոր Ֆադեն ապրում էր բացօթյա: նա ծածկի տակ էր մտնում միայն այն ժամանակ, երբ ձյունը խփում էր իր անկողնին: Իսկ ի՞նչ էր նրա անկողինը մի թաղիք իբրև ներքնակ և մի կարպետ՝ իբրև վերմակ: Դեկտեմբերի ցրտին թիակի ծայրով կոտրում էր գետակի բարակ սառույցը, մտնում էր մեջը լողանալու և կողինքը շալակած, թիակը թևատակին գնում պատսպարվում էր մոտակա ջրաղացներից մեկում: Իր սիրած տեղը խութեցի Միրոյի աղորիքն էր դի– մացի սարալանջին կամ Թամոյի հոչակավոր ջրաղացը՝ Ծո– վասարի վրա: Գարնանը նա շալակում էր կողինքը և թիակը թևատակին բարձրանում էր սար:

Ջրաղացաքարերի գոռոցը ձորերի մեջ և Սասնո գահավեժ ջրերի որոտը բարձր լեռներում սա էր տալվորիկցի Ֆադեի բովանդակ աշխարհը: Իսկ ինչեր ասես նա չէր տեսնում այդ լեռների բարձրության վրա: Նույնիսկ գիտեր, թե ինչ է կատարվում բարձրաթռիչ արծվի հետ, երբ նա վայր է ընկնում երկնքից:

Մեր զրույցի ժամանակ Ֆադեն հանկարծ թռավ տեղից.

Էդ ո՞վ կտրեց իմ առվի ջուրը, ասաց, թքեց ափի մեջ և թիակը բռնած շպրտեց լեռնիվեր: Շուտով վերադարձավ մի ահագին բազե ձեռքին» Արծիվն ու բազեն կռվել էին օդում: Բազեն պարտված ընկել էր առվի մեջ, խափանելով ջրի ընթացքը:

Իսկ պատահել է, որ վերևից արծիվ ընկնի:

Մի անգամ ընկավ, ասաց Ֆադեն: Ուժեղ փոթորիկից լեռնային մի արծիվ ընկավ դիմացի քարափին: Գնացի դիտելու: Օ՛, ինչ զարհուրելի բան է, երբ ընկնողը արծիվ է: Թևերը ջարդված էին: նախ անծեղները մոտենալով հանեցին աչքերը՝ կտուցները նրա գագաթին զարկելով: Հետո նապաստակները հավաքվելով նրան քարշ տվեցին մի ժայռի տակ: Նապաստակներից հետո դաշտային խոշոր մկները բարձրացան նրա թևերին: Իսկ երբ վերջին անգամ գնացի՝ անթիվ մրջյուն ու ժժմունք կտուցի միջով տարածվել էին նրա մարմնի վրա:

Այդ քարափի կողմից, ուր արծիվն էր ընկել, մի խումբ լեռնականներ երևացին:

Էհե՛յ ալիանցիք, էդ ու՞ր կերթաք, գոռաց ջրվոր Ֆադեն թիակը բարձրացնելով:

Յատուկ Դրէմ

Կերթանք Շապինանդին զինաթափ անելու, պատասխանեցին ալիանցիք միաբերան:

Խեղճ Շապինանդը ձեզ ինչ է արել, որ կերթաք նրա վրա: Ի՞նչ եք ուզում էդ հիվանդ, քամոտ մարդուց, որի ամբողջ փափագը մի բարկ թոնիր է կամ մի քանի բուռ տաք ավազ մեր ձորերի մեջ:

Նրանցից մեկը հեռվից բացատրեց, որ Սասնա մեծերի և նրա խմբի մեջ վեճ է ծագել: Մուշից մարդ է եկել երկու կողմերը հաշտեցնելու, բայց Շապինանդը չի ուզում զիջել: Տաղվրնիկի մի կիսամութ գոմում նստած, նա զենք է շինում իր զինվորների համար:

Մոտ եկեք, ձեզ մի բան ասեմ, խոսեց Ֆաղեն: Ալիանցիք վազելով շրջապատեցին մեզ:

Իմ թիա՞կն է զորավոր, թե Շապինանդի զենքը:

Քո թիակը, ասացին:

Ուրեմն դուք ինձ պիտի զինաթափ անեք և ոչ թե Շապինանդին:

Տեսան, որ խելառ բան է ասում, շտապեցին հեռանալ:

Կացեք, մի բան ասեմ:

Խումբը կանգ առավ:

Մի տարի էս սարի վրա էնքան ձյուն եկավ, որ եթե ճնճղուկը պառկեր մեջքի վրա և ոտները տնկեր վերև՝ կհասներ աստծուն: Խելքս փչեց թե՝ թիակս առնեմ ելնեմ նստեմ էդ ձյունների վրա: Հագա իմ աբան և թիակը ձեռքս ելա նստեցի աստծո չոքերի տակ: Հանեցի քիսես, որ մի ճղարա քաշեմ: Մեկ էլ էն տեսնեմ, որ ձենս Տալվորիկի ձորից է գալիս: Դու մի ասի, գլորվել ընկել եմ անդունդ՝ թիակս մոռացած երկնքում: Գարնանը Խտանա կածի ձյուները հալվեցին ու իմ թիակը թըր՛մփ ընկավ ցած: Էսպես է աշխարհի բանը: Մի օր սարի վրա ես, մեկ էլ տեսար ձենդ անդունդից եկավ: Մի քիչ առաջ էս գելհավքը* օդի մեջ կռվում էր

կշկուռի հետ: Կշկուռը հաղթեց և գելհավքը վերևից ընկնելով քանդեց իմ առուն: Ես թիակի պոչով նրան հրեցի մի կողմ և ջուրը գընաց: Հիմա դու՞ք եք ուզում մայր առվի ջուրը կտրել:

Մե՞նք, գարմացան ալիանցիք:

Որովհետև դուք ավելի անմիտ եք, քան թե գելհավքը: Դուք կռվի եք ելել կշկուռի դեմ: Էնպիսի մի ժամանակ, երբ Սոսե Իմոն դեռ չի վերադարձել խառալների երկրից, երբ Գևորգ Չաուշը Սերոբի խմբից հեռացած իր վիշտն է ողբում Շուշնամերկի անտառներում, դուք գնում եք Անդրանիկի զենքերը խլելու:

Մենք մենակ չենք, շենիկցիներն էլ են մեզ հետ:

Նրանք ձեզանից պակաս անմիտ չեն: Դուք ուզում եք ազգի մայր առուն քանդել: Բայց վա՛յ ձեզ, եթե վերևից ընկաք: Բոլորիդ էս թիակիս պոչով մի կողմ կշպրտեմ ու ջուրը նորից անխափան կերթա:

Էս ջրտուքվարը կատարյալ խենթ է, ասացին ալիանցիք ու հեռացան:

Խենթը դուք եք, մեկ էլ էն ընկնավոր սուլթանը, որ իմ շաղգամի արտի մեջ զորանոց էր շինել, գոռաց տալվորիկցին, իր ձեռքի գելհավքը բարկությամբ շպրտելով նրանց ետևից:

Արդեն ուշ էր: Ես իրավունք չունեի այդքան դանդաղել ճանապարհներին: Ֆադեին թողնելով իր գարու արտի և առվի կողքին, արագ վերցրի իմ տոպրակը և շտապեցի դեպի այն թաղը, որտեղից դուրս էի եկել Աղբյուր Սերոբի պատվերը կատարելու:

ՍՈՍԵԻ ԿԱՆՉԸ

Սակայն բախտը չժպտաց ինձ:

Շուտով լուր ստացվեց, որ ալիանցի երիտասարդները շենիկցոց հետ միաբանելով խուժել են Տալվորիկ և Անդրանիկին զինաթափ անելով փախցրել Սիմ լեռան կողմերը:

Մուշի մեջ իշխում էր ոստիկանապետ Հյուսնի էֆենդին, իսկ Սասունում ցեղապետ էր Բշարե Խալիլ աղան: Եվ ճիշտ այն միջոցին, երբ Անդրանիկը զինաթափված էր, սուլթանից հրաման եկավ, ողջ թե մեռած, ձեռք գցել Սերոբ Աղբյուրին:

Սասնո Գեղաշեն գյուղում Ավե անունով մի իշխան կար: Ավեն ռես էր իրենց գյուղում: Տեսնելով, որ քաջությամբ անկարող են նեմրութի հերոսին հաղթել, Հյուսնի էֆենդին և Բշարե Խալիլը որոշեցին Ավեի միջոցով Սերոբին թունավորել: Այդ գործի համար Հյուսնին ռես Ավեին խոստացավ մի կճուճ ոսկի:

Իմացավ Ավեն, որ Սերոբ Աղբյուրը Խլաթից Գելի գալով իր զինվորներին դրել է թաղերի վրա, իսկ ինքը և Սոսեն ապրում են Տեր Քաջի լեռան գոմում:

Ավեն մի քանի անգամ տեսության գնաց Սերոբին ծանոթ իշխանների հետ և ամեն անգամ ջորին բարձած ուտելիք տարավ նրա համար, մինչև որ Սերոբ Աղբյուրի և Տեր Քաջի կատարյալ վստահությունը շահեց:

Վերջապես Մուշից եկավ թունավորելու հրամանը: Ավեն դարձյալ այցելության գնաց Սերոբ Աղբյուրին, բայց այս անգամ ուտելիքը թունավորված էր: Հյուսնի թույնը մի այնպիսի բաղադրություն ուներ, որ անմիջապես չէր մեռցնում, այլ ենթակային երեք-չորս օրով պահում էր կիսազգա վիճակում, անկարող շարժվելու:

Սերոբը միամտորեն կերավ ռեսի բերած պանիրը և ծխախոտը քաշեց: Երբ ամեն ինչ կարգադրված էր, Ավեն լուր ուղարկեց Խալիլ աղային, որ Սերոբը թույնը ընդունել է, ապա գնաց Մուշ և ոստիկանապետի խոստացած մի կճուճ ոսկին առնելով՝ հայտնեց, թե գորքը կարող է շարժվել: Խալիլն իր հերթին այդ մասին շտապ հայտնեց Բաղեշ: Եվ նույն գիշերը սուլթանի գորքը Բաղեշից շարժվեց դեպի Բռնաշեն, լուր տարածելով, թե Սասնո ըմբոստ քրդերը ճնշելու կերթա:

Հրամանատարը Ալի բեկն էր:

Յատուկ Դրէմ

Միաժամանակ Խալիլի գլխավորությամբ Գելու վրա շարժվեցին Խուլբի և Խիանքի զինված քրդերը: Սուլթանի զորքը հինգ հարյուր ասկյար էր, աշիրեթը՝ հազար հինգ հարյուր:

Գելին պաշարվեց 1899-ի Հոկտեմբերին, երբ ամբողջ գյուղը քնած էր: Լեռան գոմի մեջ քնած էր նաև Սերոբ Աղ– բյուրը՝ գլուխը դրած իր հրացանի նոր շինված խզակոթին:

Սոսեն առավոտ շուտ դուրբինն առավ ելավ դուրս: Նայեց տեսավ Թուխ Մանուկ եկեղեցու մոտով զորք է գալիս:

Փաշա, ասաց Սոսեն, ասկյարն ելավ ժամու դուռ:

Սերոբը շեմք ելավ: Դուրբինն առավ նայեց, բայց աչքերը ծանր էին, չկարողացավ ջոկել: Ետ դարձավ, որ մոսինը վերցնի ոտքերը փոթ եղան, վայր ընկավ: Ձեռքը տարավ դեպի գլուխը մազերը մնացին բոի մեջ:

Վա՛յ ինձ, Գեղաշենի ռես Ավեն թույն է խառնել իմ հացին, գոռաց Սերոբն ու գլխին զարկեց: Ու զղջաց, որ իր գիշերը շաբաթ դարձավ ու շաբաթը ամիս դարձավ Սասունում:

նրա գոռոցից ու անսպասելի հրածգությունից գյուղը զարթնեց:

Զարթնեց նաև Տեր Քաշը:

Թուխ Մանուկ եկեղեցու մոտով սև զորքը սուրաց դեպի Սերոբի պահված լեռան կողմը:

Սոսեն բռնեց Սերոբի թևից, որ բարձրացնի, բայց ծանրությունից երկուսն էլ վայր ընկան: Տեր Քաջն ու իր որդի Ադամը փորձեցին՝ նրանք էլ վայր ընկան:

Մի գնդակ եկավ լեռան կողից, և Տեր Քաջն հենց այդպես էլ ընկած մնաց իր դռան շեմքին:

Յատուկ Պոէմ

Հանկարծ փոթորիկի պես հայտնվեցին Սերոբի զինվորներից չորս հոգի և Սոսեի հետ Սերոբին իրենց թևերին առնելով թռցրին դեպի Անդոկ: Ամբարնի կոչվող մի բարձունք կա Անդոկի վրա. նրան այնտեղ դրին: Սոսեն մոսինը տվեց Սերոբի ձեռքը, բայց նրա թևը մերժեց զենքը վերցնել: Հայդուկապետը դժվարությամբ մեկ-երկու գնդակ վառեց և թուլացած ընկավ:

Ու Ամբարու վրա հերոսաբար կռվելով նահատակվեցին Սերոբ Աղբյուրի եղբայրները Մխեն ու Զաքարը և որդին՝ Հակոբը: Զոհվեցին նաև չորսը այն յոթ զինվորներից, որ Խլաթից եկել էին Սասուն: Իսկ Տեր Քաջն արդեն սպանվել էր իր պատի տակ:

Տեր Քաջից մի որդի մնաց Տեր Քաջ Ադամը, Սերոբից՝ մի այրի Սոսե ու մի քանի զինվոր:

Ու գոռաց Սոսեն Անդոկից, որ ձայնը Տալվորիկ հասնի: Բարձրացավ մի քարաժայռի ու նորից գոռաց. «Անդրանի՛կ, Սերոբը նեղ տեղ է, Գևորգի, Մակարի հետ օգնության հասեք»: Վերջին անգամ կրակեց Սերոբը և զենքը վայր նետեց զայրույթից:

Սոսեն վերցրեց հերոսի հրացանը, չոքեց մի ժայռի ետև ու սկսեց կատաղորեն կրակել: Անզորությունից մռնչում էր Սերոբը, աչքերը շանթեր էին արձակում: Ամբարնու լեռան կողին մեռնում էր Նեմրութի Ասլանը մենակ ու անօգնական:

Երկրորդ անգամ դեպի Տալվորիկ գոռաց Սոսեն: Ջրտուքվար Ֆադեն հեռվից առավ նրա կանչը և Խտանա կածին կանգնած որոտաց դեպի Տալվորիկ. «Սերոբը նեղ տեղ է, հասե՛ք»:

Հայց ոչ Գևորգն էր այնտեղ, ոչ Անդրանիկն էր օգնության կանչը լսում: Մեկը Շուշնամերկի անտառները քաշված իր վիշտն էր ողբում մենության մեջ, իսկ մյուսը անզեն և անզոր դեպի Սիմ լեռը փախչելով՝ կաշկանդվել էր Սեմալ գյուղի գոմերում:

Սոսեն բարձրացավ հավասարվեց ջրտուքվար Ֆադեին ու նրանք սարի գագաթին կանգնած միատեղ գոռացին, «Հասե՛ք»:

Յատուկ Պոէմ

Անդրանիկն առավ աչդ կանչը Սեմալում, բարձրացավ տանիք ու գայրույթից գնաց ու եկավ տանիքին: Իր զինվորները փամփուշտ ու զենք կապեցին վրան ու նրա հետ դեպի Սերոբի լեռը շարժվեցին:

ճիշտ այդ միջոցին մի գնդակ վերևից գալով խոցեց Աղբյուր Սերոբին: Սասնո ցեղապետ Խալիլ աղան հասավ և մեռած հերոսի գլուխը կտրելով ու վիրավոր Սոսեին գերի վերցնելով, հրաման տվեց ավարտի փող հնչեցնել: Քիչ վերջը թե՛ զորք, թե՛ խուժան լեռներից իջան վար:

Հեծյալ մի ոստիկան Սերոբ Աղբյուրի գլուխը մի ցցափայտի զարկած երեք զինվորով գնում էր Բշարե Խալիլի առջևից: Ետևից ձիու վրա վիրավոր Սոսեն էր իջնում երկու ոստիկան կողքերից նրա թևերը բռնած, իսկ սանձը բռնած էր ոես Ավեն: Սոսեի ետևից Ալի փաշան էր շարժվում իր հաղթական զորքով:

Սերոբ Աղբյուրի գլուխը նախ տարան Մուշ, ապա այնտեղից տարան Բաղեշ: Երկու օր քաղաքի հրապարակի վրա ցուցադրելուց հետո հանձնեցին Բաղեշի հայոց առաջնորդարանին:

Կարմրակ անունով մի վանք կա Բաղեշում: Հայոց առաջնորդը և վանքի սպասավորը նեմրութի հերոսի գլուխը գիշերով թաղեցին Կարմրակ վանքի արևելյան գավթի մեջ, մի ծեր թթենու տակ:

 ■■■■■■■■ ■ ■■■■■■■■■ ■■■■■■■■■
■■■■■■■ ■■■■■■, ■■■■■■■■ ■■■■■■,
■■ ■■■■ ■■■■■ ■■■■ ■■■■■■■ ■■■■■■■,
■■■■■■ ■■■■■■ ■■■■■■■ ■■■■■■ ■■■■■■■,
■■■■ ■■■■■■■ ■■■■ ■■■■■■■■ ■■■■■■■

Ես Սասունից գնացի Բաղեշ, գտա Կարմրակ վանքը և մի ամբողջ գիշեր արտասվեցի այդ դժբախտ գերեզմանի վրա, ուր մի հատիկ գլուխ էր հանգչում Սերոբ Աղբյուրի հերոսական գլուխը:

Առաջին մարդը, որ ինձ արթնացրեց այդ շիրիմի վրայից, մի թուրք ոստիկան էր: նա ինձ գիշերով բանտ տարավ: